Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

14304

ՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱՂԵՐ

ԵՒ

ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿԻՆ ԲԱՂՋԱՆՔԸ

ԳՐԵՑ՝ ՀԱՅԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

1932

ՏՊԱՐԱՆ "ԱՐԱՐԱ,, ԽԱՆՏԷՔ, ՀԱԼԷՊ

891.99
Մ-99

89.99
Մ-99
2003

ՀԱՅՈՒ ՎԱՅԲԻՐՆ

1. Հազար ին հայրիւր, տասն եւ հինգ թուում
Համաշխարհային, մեծ պատերազմում
Մի դժնդակ աղէտ, պայթուեց մեր գլխում
Տխեղծ հայուն դէմ, առանց ոգորում:
Լսեցէք հայեր. ուշ դրէք հայեր

2. Գարուն էր եղանակը սքրալի
Հայ ազգը հլու, սիրտը տխրալի
Նենգամիտ թշնամին սիրտը ոխով լի
Համակ լքում էր հայ տարր ողբալի:
Սգաւոր հայեր. ա՜խ թախծոտ հայեր

3. Գարունը ծիծաղաղէմ եւ ժպտուն
Դէմքը բացել էր, վհիտ զուարթուն
Հայուն միտքը քուն, թշնամուն արթուն
Խրոխտ թշնամին, անվեհեր կանգուն:
Ցուսահատ հայեր, ճարահատ հայեր

4. Կասկածը մեծ էր, վախը Ընդհանուր
Սպառնագին թիւրք, արշաւում հոն՝ ուր
Անտեղեակ Ազգ՝մ, անյարիր թափուր
Սարսում էր տալիս, հայ ազգն անծնատուր:
Անդոհուած հայեր. շըշկրած հայեր

73383 ակ

5. Հորիզոն մռայլ, տեղում էր խարոյկ
Երկնաբիրծ կայծեր, այրում Ազգ'մ եղուկ
Թշնամին նման, խաբեբայ վհուկ
Կարթել էրուզում, հայ Ազգ'ն անշըշուկ:
Անլեզու հայեր, համոզուած հայեր

6. Թիւրք, Քիւրտ, եւ Չէրքէզ, հմէն հաւաքւում
Ստրուկ հայ Ազգին, վրան արձակւում
Կողել, կողոպտել, ամէն օրերում
Խեղճ հայու վայիւն, հասաւ էրկնքում:
Անհաբեկ հայեր. խելացիր հայեր

7. Կատղած թրքաց զօրք, անզուսպ արշաւում
Գալիս էր մինչեւ, ատամնին զինւում
Հոռի, բիրտ, անարգ, ձեռքերով խփում
Անթիւ շիրիմներ, գետին էր փռում:
Ա՜խ անմեղ հայեր. հոշոտուած հայեր

8. Մորթուեցին մերոնք, ոչխարի նման
Արիւնի շիթեր, առուակներ դառան
Մայր ու քոյրերնիս, Թշնամիք տարան
Հոյակապ շէնքեր, մոխիր վերածուան:
Ա՜խ անտուն հայեր. ա՜խ անտէր հայեր

9. Թափեցին այրեր, բանտեր լեցրին
Գիշերով տարին, սուրէ անցկացրին
Այրիներ, որբեր, տունից վանեցին
Կարաւան կազմելով, տարագրեցին:
Դուք զրկուած հայեր. ա՜խ լքուած հայեր

10. Խարակներ, ձորեր, մեր սպանդանոց
Սրբավայրք Դառան թատրոն զօրանոց
Մի երկսեռ ամբոխ, հազար հոգինոց
Ութ, տաս ժանտարմա, հսկում էր էնոնց:
Գլխիկոր հայեր. դուք շնչատ հայեր

11. Խփեցին ծերից, մինչեւ յերախաք,
Հազարից հազիւ, մին, մնաց հիմակ
Գերի տարուեցին, բազմաթիւ կանայք
Մեծափառ դժխոհ, մեր հայ դասակարգ.
Ոտնակոխ հայեր. անդամահատ հայեր

12. Գուժկան թշնամին, մեզ տեղահանեց
Չեզ տեղ չը մնաց, հրահանգ ազդեց
Մի գուղձի կարօտ, ապրուստէ զրկեց
Անտուաղ ծարաւ, անբուտ մեզ թողեց:
Անխնամ հայեր. սովամահ հայեր

13. Սով համաճարակ, տիրում էր չորս կողմ
Չկար, մին ասող, ազատուէք էս կողմ
Աչալուրջ զազան, փաթեց մեր չորս կողմ
Մացինք շաղաղուած, հիր արեան մէջ ողմ:
Ջախջախուած հայեր. արնեռապաղ հայեր

14. Ջարդ, թալան, տագնապ, հրկիզում, զուլում
Անհամար դիեր, գետերում լեցնում
Արիւն ու ջուրը, իրարն խառնըւում
Տիգրիսն ու Եփրատ, էլ չէին խմւում:
Դուք արիւն լացէք եւ միշտ ողբացէք

15. Չկար լրջախօս, վկայ, դատաւոր
Որ գուցէ ակնարկ'ա, նետէին էն օր
Երբ գաղթուեց հայերս ընկաւ սար ու ձոր
Դացին ջարդուեցին անապատ Տէր-Զօր:
Բնաջինջ հայեր. ջախջախուած հայեր

16. Վարդանուշ, Մարիամ, Միսաքն ու Արուշ
Կոչուեցին, Ալի, Ֆաթմա ու Այուշ
Ուրիշներին նուշ, մեզի միյ մի փուշ
Բայց պէտք է փրկել, կամ կանուխ կամ ուշ:
Անօգնական հայեր. մոռացուած հայեր

17. Պիթլիս, Վան, Կարին, դառաւ քիւրտիստան
Կիլիկիան իբրեւ, կոչուեց Թիւրքիստան
Հապա հայոց էլ, ու՞րէ Հայաստան
Թող գա՞յ մեր սեւ բաղտ, տեսնէ դատաստան:
Անբաժին հայեր. գուղձազուրկ հայեր

18. Էսքան տարիներ, պանդուխտ շարունակ
Ընկած խեղճ հայերս, կարծես պարտքի տակ
Ոչ ապրուստ ճարել, եւ ոչ էլ վաստակ
Հմէն բանէ զուրկ, օտար Ռէժիմի տակ.
Ա՜խ թշուառ հայեր. պարտատէր հայեր

19. Պէտք է միանայ, համայն հայութիւն
Կազմել մի սիրտ, մի հոգեբանութիւն
Արտորալ, սարքել, պերճախօսութիւն
Սիրել ու գրգուել, մեր հայ Ազգութիւն:
Ջեռնահաս հայեր բարերար հայեր

20. Պէտք է միանայ, վսեմ հայութիւն
Տարրական, վեհաշուք, իւր աստղ, փայլուն
Արփաւէտ ցոլքը, սփռէ հայ գլխուն
Բացուի այգ զուարթ, հորիզոն սիրուն:
Լուսաշաղ հայեր. զուրգուրալի հայեր

21. Պէտք է դղրդի, պանդուխտ հայութիւն
Ընթանալ դէպի, Հայաստան յերկրում
Մասիսն ալեփառ, հին, հին դարերում
Մի շատ յիշատակ, արթնէ մեր սրտում:
Հայրենասէր հայեր. դէպ առաջ հայեր

22. Հոն է մեր յոյսը. հոն է հայրենիք
Հոն է փրկութիւն, հոն ազատ կ'ապրինք
Հոն պիտ մոռանանք, անցեալի չարիք
Ասպարէզ բերել, սէր, ջանք.ու բարիք
Համամիտ հայեր. իրասէր հայեր

23. Եթէ այլ յերկիր, լինի դրախտում
Ոստղեր պլպլան, ջինջ լուրթ էրկնքում
Հայաստան լինի, մռայլ վիճակում
Մենք մեր մթնոլորտ, յերկիրն ենք սիրում:
Զարգացեալ հայեր, լուսաւորեալ հայեր

24. Եթէ այլ յերկրում սոխակներ երգում
Դիւթագէզ վայրեր, մեխակներ բուրում
Հայաստան լինի, փշալից վայրում
Մենք մեր ապառաժ, յերկիրն ենք սիրում:
Աշխատասէր հայեր. արուեստագէտ հայեր

25. Եթէ այլ յերկրում, դաշտերն մշակում
Ամրակուռ, փարթամ, շէնքեր կառուցում
Հայաստան խոպան, տրներ քարայրում
Մենք մեր հայրենի, խրճիթն ենք սիրում:
Ճարտարապետ հայեր. անխոնջ մշակներ

26. Այլ յերկրում խօսին, բազմաբարբառում
Դպրոցնում տիրէ, գերազոյն ուսում
Հայաստանում լոկ, հայ լեզու խօսւում
Մենք մեր մայրենի, լեզուն ենք սիրում:
Մայրենի լեզու. մայրենի բարբառ

27. Եթէ այլ յերկրում, պերճ, շռայլ ապրում
Ջութակներ, դաշնակ. սրինգ, նուագում
Հայաստանում լոկ, մի փող մէ փչւում
Մենք մեր անայլայլ, յերկիրն ենք սիրում:
Երաժիշտ հայեր. նուագածու հայեր

28. Եթէ այլ յերկրում, համադամ ուտում
Թանգ, ու հազուագիւտ, զգեստներ հագնում
Հայաստան անբուտ, գրգլեակ հագնում
Մենք մեր չքաւոր, յերկիրն ենք սիրում:
Դուք ժուժկալ հայեր. անձանձիր հայեր

29. Հոն պիտ մոռանանք, մեր ստրկութիւն
Փրկուիլ թշնամուն, ճանկերից գրթնուն
Հոն կրնանք ծգտիլ, դէպ ազատութիւն
Ազատել փրկել, մեր հայ ազգութիւն:
Ազատարար հայեր, վրէժխնդիր հայեր

30. Պէտք է տենջանքով, միանանք իրում
Վտարել, ծգել, սրտնուս տագնապում
Գնանք դէպ անմահ, փառքի ճամբայում
Ազատել, փրկել, թշուառ հայութիւում:
Բաղձալի հայեր. դուք հանճար հայեր

31. Լաւ պէտք է գիտնալ. հո՛ն, յաւերժական
Տեղ մըն է սթար, յերկիր՝մ պատուական
Մեր նոր սերունդին, փառք՝մ արքայական
Թափառաշրջիկ, հայոց ապաստան:
Ապրի հայ ազգը. կեցցէ Հայաստան

32. Տիպարս է թէպէտ, պարզ եւ համառօտ
Երկասիրութիւն, նման է վառօդ
Գրած ատենրս, քաշում եմ կարօտ
Տանչւում է հոգիս. եւ սիրտս է խոցոտ:
Կարօտեալ հայրենիք. դուն սիրուն հայրենիք

Հայաստան հայով
Հայ ազգ, զորովով

Հայկ Մուրատեան

2013

14304